## ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Գեր. Մամբրէ նորապսակ Եպիսկոպոս Մամիկոնեանց՝ Առաջնորդն Բաղիշոյ՝ ի 21-ն ամսոյս մեկնեցաւ ի Մայր Աթոռոյս։

## ՓՈԽ. — ԹԵՄԱԿԱԼ ԵՐԵՒԱՆԱՑ.

Ըստ հրամանի Վեհափառ Հայրապետին՝ Գեր. Եղիազար Ս. Արքեպիսկոպոս՝ ի տեղի Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոսի՝ Երեւանայ վիճակին փոխ. — Թեմակալ կարգեցաւ։

## ԻՇԽԱՆ ՀԵՆՐԻԿՈՍ ՊՈՒՐՊՈՆԵԱՆ.

Ի 24ն ամսոյս՝ Թագաւորազուն Ս. Իշխան Բարձրապ. Հենրիկոս Պուրպոնեան՝ Կոմս Պարտւոյ՝ եկն ի տեսութիւն Վեհ. Հայրապետի և յայցելութիւն Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի։

Նորին Ս. Օծութիւնն արժանաւոր մեծարանօք հիւրասիրեց, և ի պատիւ նորին բարձրութեան մի ճաշ տուաւ, յորում սեղանակից եղան Երեւանայ նահանգապետ Վ. սեմ. Կարմալին և երկու Եպիսկոպոսունք, և Թագաւորազուն իշխանին ուղեկիցներ Վ. սեմ. Մարգիզ Մալասպինա և Վ. սեմ. Կոմս Մօնպէյլ, և այլ քաղաքական պաշտօնակալք տեղւոյս։

Յիշեալ Իշխանն՝ նախ քան զճաշն՝ մտաւ ի Ս. Տաճարն յերկրպագութիւն և այցելեց Մայր Աթոռոյս արժանաւոր վայրերուն, և երեկոյեան մօտ՝ վերադարձաւ յԵրեւան։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շ–բ––Ն–կ––Բէ–Ն.)

### ՅԱՐՄԱՒԻՐ.

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Յարութիւն Կիրէնեանց | 2 | |
| Պօղոս Մուրատեանց | 2 | |
| Յովհաննէս Մուրատեանց | 1 | |
| Խաչիկ Եղուբեանց | 2 | |
| Եսայի Մուրատեանց | 5 | |
| Ղափլան Ղափլեանց | 1 | |
| Մինաս Տէրտէրենց | | 50 |
| Մարտիրոս Փարիզեանց | 1 | |
| Գասպարեան Եաղուբեանց | 1 | |
| Ղևերի Առաքելեանց | 2 | |
| Աւետիք Յովհաննէսեան | 2 | |
| Վարդան Փանոյեանց | 1 | |
| Կարապետ Շիրինեանց | | 50 |
| Գէորգ Մուրատեանց | 1 | |
| Մելքոն Գոմբասեանց | 1 | |
| Թովմաս Ջեկէսեանց | 1 | |
| Պետրոս Յովհաննէսեանց | 1 | |
| Տիրացու Խաչատուր Տըմբոյեանց | 1 | |
| Մարգար Ճաղուբեանց | | 50 |
| Գրիգոր Շիրինեանց | 2 | |
| Աղէքսանդր Բաղերեսեանց | 1 | |
| Սարգիս Փանոսեանց | 2 | |
| Գրիգոր Ճաղուպեանց | | 50 |
| Մինաս Մուրատեանց | 5 | |
| Աւետիք Թապէլեանց | | 50 |
| Կարապետ Պշէկեոսեանց | | 50 |
| Խաչատուր Օքսենտինեանց | 1 | |
| Միքայէլ Խաչերեսեանց | 1 | |
| Բաղդասար Այվազեանց | 1 | |
| Յարութիւն Օքսենտեանց | 1 | |
| Յարութիւն Ճաղուպեանց | 5 | |
| Գրիգոր Գասպարեանց | | 50 |
| Կարապետ Շարապեանց | | 50 |
| Նիկողայոս Տօմպալեանց | 1 | |
| Գասպար Օքսէնտեանց | | 50 |
| Այրի կին Գոհար Այգենուճի | 1 | |
| Սարգիս Այվազեանց | 1 | |
| Գէորգ Աքսենտեանց | | 50 |
| Աւետիք Աքսենտեանց | | 50 |

| | | |
|---|---|---|
| Միքայէլ Աբանեանց | 1 | |
| Դաւիթ Կուսիկեանց | | 50 |
| Աստուածատուր Ճաղուպեանց | 1 | |
| Խաչատուր Կիրակոսեանց | 1 | |
| Պարոն Ազկինեանց | 1 | |
| Կարապետ Եազոճեանց | 1 | |
| Յարութիւն Տէրտէրեանց | 1 | |
| Աւետիք Ճաղուպեանց | 1 | |
| Գէորգ Տէրտէրեանց | 2 | |
| Յարութիւն Աբանեանց | 1 | |
| Մատթէոս Ճաղուպեանց | 1 | |
| Սարգիս Մաթոսեանց | | 50 |
| Անտոն Աբանեանց | | 50 |
| Ջաքար Յովհաննէսեանց | | 20 |
| Մահտեսի Գէորգ Հաբաճեանց | | 75 |
| Պապաջան Վեկիժանեան | 2 | |
| Անտոն Մուրատեանց | | 50 |
| Անտոն Ճաղուպեանց | | 50 |
| Կումատ Շիրինեանց | 1 | |
| Գէորգ Աբանեանց | 1 | |
| Մովսէս Յովհաննէսեան | 1 | |
| Արտեմ Արտենեանց | 1 | |
| Խաչերես Արտեմեանց | | 50 |
| Ասլան Յովհաննէսեանց | | 25 |
| Առաքել Քերականեանց | | 25 |
| Բարսեղ Մուրատեանց | 1 | |
| Սիմէօն Մուրատեանց | 1 | |
| Սարգիս Յովհաննէսեանց | | 25 |
| Աստուածատուր Խարեղեանց | | 50 |
| Աստուածատուր Տօմպօլեանց | 1 | |
| Յովակիմ Ճաղուպեանց | 2 | |
| Յովսէփ Աբանեանց | | 25 |
| Աստուածատուր Ճաղուպեանց | | 40 |
| Սարգիս Լօրեանց | | 20 |
| Յարութիւն Մուրատեանց | 2 | |
| Մինաս Շիրինեանց | | 20 |
| Պապաջան Յովհաննէսեանց | 1 | |
| Յակոբ Մուրատեանց | | 25 |
| Խաչերես Խաչերեսեան | 1 | |
| Մինաս Քերովբեանց | 1 | |
| Առաքել Թօմբանեանց | | 50 |
| Յովսէփ Լօրէնեանց | 1 | |
| Կարապետ Կիրակոսեանց | 1 | |
| Մկրտիչ Թէթղեանց | 1 | |
| Աստուածատուր Ղամիլանեանց | | 50 |
| Պօղոս Գասպարեանց | | 15 |
| Եսայի Պզէկեոսեանց | | 18 |
| Պարոն Հատօսեանց | | 50 |
| Գէորգ Մուրատեանց | 1 | |

(Շարունակելի).

## ՀԱՇԻՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԳՈՒԱՑ.

### Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

1872 Թուականի Մշակի 19 համարում արդէն յայտնի է, որ տեղս կազմուել էր «Բարեգործական» անունով ընկերութիւն, որի նպատակն է օժանդակել Բագու գտնուող թէ տեղացի եւ թէ օտարական աղքատներին: Այդ գործի կառավարութեան համար ընտրուել էին մի տարի ժամանակաւ հինգ Հոգաբարձուք — Արժ. Թադէոս Աւագ Քահանայն եւ հետեւեալ պարոնայքը — Գ. Գիլտարեանց՝ որ եւ գանձապետ, Գ. Այվազեանց, Ա. Մելիքեանց, եւ Բ. Սարգիսեանց:

Ընկերութեան առաջին տարւոյ շրջանը լրացած լինելով Ապրիլի 1-ին Հոգաբարձութիւնը հրաւիրական թղթով հրաւիրում է Բագու գտնուած բոլոր թէ մշտապէս եւ թէ միանուագ նուիրատու անձանց ի հաշուատեսութիւն: Նոյն օրը եկեղեցւոյ մէջ յիշեալ Աւագ Քահանայն, որ եւ հոգաբարձութեան Նախագահ է, յայտնեց Հայ հասարակութեան իւր եւ հոգաբարձուների կողմից շնորհակալութիւն, որ չեն խնայել իրանց կամաւոր նուէրքը աղքատների օգտի համար: Ի վերջոյ եւ յայտնեց, որ ինչպէս յայտնուած էր Հոգաբարձութիւնից, երեկոյեան 6 ժամին ժողովուին յիշեալ ընկերութեան գանձապետ պարոն Գ. Գիլտարեանցի տուն, ուր տարեկան ընդհանուր հաշիւ տեսնելու:

Բաւական եւ երեւելի անձինք հաւաքվեցան յիշեալ տեղում: Կարդացվեցան ընդհանուր հաշիւները, եւ բաժանվեցան իւրաքանչիւրին առանձին թերթերի վերայ տպագրուած:

Մի տարւոյ ընթացքում Հոգաբարձուք գտել էին թէ մշտապէս եւ թէ միանուագ 102 նուիրատու անձինք, որոնցից ընծայաբերութիւն եղած է . . . 941 ռ. 50 կ.

Առանձին արդիւնաբերութիւն Հոգաբարձուաց.

Խնդրանօք Հոգաբարձուաց գիմնազիոյի Հայ ուսանողները պարոն Ամիրազ-